ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1114-Ա « 22 » մարտի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի Հ.1868-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով.

1.Երևանի քաղաքապետի 2010 թվականի մայիսի 14-ի «Երևան քաղաքի Նոր Նորք, Մալաթիա-Սեբաստիա, Աջափնյակ, Շենգավիթ, Էրեբունի, Նուբարաշեն, Ավան, Նորք-Մարաշ վարչական շրջանների մի շարք փողոցներում հասարակական տրանսպորտի նոր կանգառատեղեր սահմանելու և հին կանգառները վերականգնելու մասին» հ.1868-Ա որոշման 1-ին կետով հաստատված հ.5 հավելվածի ցանկում կատարել հետևյալ լրացումները.

1) ցանկի 1-ին կետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Էրեբունու փողոց.

- Էրեբունու փողոց հ.18 հասցեի հարակից ճանապարհահատված,
- Էրեբունու փողոց հ.23 հասցեի հարակից ճանապարհահատված»,

2) ցանկի 3-րդ կետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.Սասունցի Դավիթ փողոց.

- Սասունցի Դավիթ – Բելինսկու փողոցների խաչմերուկից դեպի Ազատամարտիկների փողոցի ուղղությամբ, տեղային լայնացման հատվածում»,

3) ցանկի 4-րդ կետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«4.Ռոստովյան փողոց.

- Ռոստովյան փողոց հ.9 հասցեի հարակից ճանապարհահատված»:

2.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի ու ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունների պետերի վրա:

3.Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ